05/ 5257-18
1/17.3/4589-18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 387

«17» 04 2018թ. ք.Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՀՐԱՀԱՆԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ15-Ի ԹԻՎ 832-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված փրկարարական ծառայության կանոնագրքի 87-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 8-րդ մասերով, 88-րդ հոդվածի 3-րդ մասով, 90-րդ հոդվածի 3-րդ մասով և 92-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) օպերատիվ հերթափոխի հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) օպերատիվ հերթապահության կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց պահպանման, վարման ու այլ մարմինների փոխանցման կարգը՝ համաձայն հավելված 2-ի.

3) օպերատիվ հերթապահության իրականացման ժամկետները և ընդունման - հանձնման կարգը՝ համաձայն հավելված 3-ի.

4) օպերատիվ հերթափոխերի կազմը, հերթապահության անցկացման և համալրման կարգը՝ համաձայն հավելված 4-ի.

5) օպերատիվ հերթափոխում ընդգրկված անձանց փոխարինման և հերթապահության ուժեղացման կարգը՝ համաձայն հավելված 5-ի.

6) օպերատիվ հերթափոխի կապի միջոցների շահագործման և պահպանման կարգը՝ համաձայն հավելված 6-ի.

7) օպերատիվ հերթափոխում ահազանգերի սպասարկման, տեղեկատվության գրանցման, մշակման, պահպանման, արտացոլման և փոխանակման կարգը՝ համաձայն հավելված 7-ի.

8) ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ - ում արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների, վտանգավոր տարերային երևույթների վերաբերյալ տեղեկատվության գրանցման դեպքում օպերատիվ հերթափոխի անձնակազմի գործողությունների կարգը՝ համաձայն հավելված 8-ի.

9) հեռախոսային խոսակցությունների և ռադիոեթերի ձայնագրման կարգը՝ համաձայն հավելված 9-ի.

10) հայկական ատոմային էլեկտրակայանում (այսուհետ՝ ՀԱԷԿ) ճառագայթային (միջուկային) վթարի (վթարի սպառնալիքի) դեպքում օպերատիվ հերթափոխի անձնակազմի գործողությունների կարգը՝ համաձայն հավելված 10-ի.

11) արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքի պատահարի վայրում նկարահանումների իրականացման, տեսա/լուսանյութերի ծառայողական օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 11-ի.

12) պետական մարմինների ղեկավարների, շահագրգիռ ծառայությունների օպերատիվ հերթապահների, ավագ կարգավարների, դիսպետչերների ազդարարման սխեման՝ համաձայն հավելված 12-ի.

13) ՀՀ ԱԻՆ ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն հավելված 13-ի.

14) ՀՀ ԱԻՆ ՓԾ ղեկավար կազմի և մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնների օպերատիվ հերթապահների ազդարարման սխեման՝ համաձայն հավելված 14-ի.

15) ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ - ի անձնակազմի ազդարարման սխեման՝ համաձայն հավելված 15-ի.

16) օպերատիվ հերթապահության մեջ ներգրավված ստորաբաժանումների ցանկը և այդ ստորաբաժանումների գործառույթները՝ համաձայն հավելված 16-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ հերթափոխի հրահանգը և գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1039-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 832-Ա հրամանը:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ՏՈՆՈՅԱՆ